«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1219-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1219-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, ինչպես նաև «Ոստիկանության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի պահեստամասերի, սարքավորումների և օժանդակ միջոցների ցանկը հաստատելու մասին**» թիվ 1219-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- Որոշման վերնագրից, 1-ին և 2-րդ կետերից հանել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության բառերը,
- Որոշման նախաբանը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ոստիկանության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***,

- Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը

հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

«____» _____ 2020թ.

Երևան

Հավելված

ՀՀ կառավարության 2020թ.

____ _____-ի N ___-Ն որոշման

Հավելված

ՀՀ կառավարության 2008 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1219-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՐԱԶԵՆԻ
ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ

NN	Հրազենի անվանումը	Պահեստամասերի	Սարքավորումների

ը/կ		**անվանումները**	**անվանումները**
1	2	3	4
1.	Մակարովի ատրճանակ	բռնակ ձգան փակաղակի արգելակիչ մարտական զսպանակ հետադարձ զսպանակ նշանոց զարկան արտանետիչ ապահովիչ	փամփշտատուփ մաքրիչ
2.	Ստեչկինի ավտոմատ գնդացիր (ՍԱԳ)	բռնակ ձգան փակաղակի կանգ մարտական զսպանակ հետադարձ զսպանակ նշանոց զարկան արտանետիչ ապահովիչ	փամփշտատուփ մաքրիչ
3.	Կալաշնիկովի ինքնաձիգ	բռնակի միացնող պտուտակ ապահովիչ	կաշվե փոկ պիտույքների պահատուփ

		փողի պահպանակի օղակ փողի պահպանակ զարկան արտանետիչ խզակոթ փողակալ ատրճանակի բռնակ փակաղակ փողատուփի կափարիչ	խոզանակ յուղաման շամփուր պահեստատուփ
4.	Դիպուկահար հրացան	բռնակի միաց-նող պտուտակ ապահովիչ փողի պահպանակի օղակ փողի պահպանակ զարկան արտանետիչ խզակոթ փողակալ բռնակ փակաղակ փողատուփի կափարիչ	կաշվե փոկ պիտույքների պահատուփ խոզանակ յուղաման նշանառման սարք շամփուր պահեստատուփ
5.	7.62մմ, 5,45մմ տրամաչափի՝ Կալաշնիկովի ձեռքի գնդացիր	խզակոթ (միայն ԿՁԳ-ի համար)	պիտույքների պահատուփ

	(ԿՁԳ)	փողակալ	շամփուր
		բռնակ	փամփշտատուփ՝ 40 փամփուշտի համար
		բռնակի միացնող պտուտակ	փամփշտատուփ՝ կլոր՝ 75 փամփուշտի համար
		զարկան	
		արտանետիչ	երկգլխանի յուղաման
6.	Ձեռքի հակա-տանկային նռնականետ	զարկան	աչքի դիտախողովակ
		մարտական զսպանակ	պտուտակահան-բանալի
		ապահովիչ	հարվածաձգանային մեխանիզմ
		ֆիքսատորի զսպանակ	նշանոցի ստուգման սարք
			բանալի
			նռնականետի մաքրիչ

: